ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.12.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-47/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-47/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից 05.12.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-47/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն հայտնել է, որ 2013թ. նոյեմբերի 27-ին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկատվական կայքում (www.gnumner.am) «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից տեղադրվել է «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի աուդիտորական ծառայությունների ձեռքբերման հրավեր: Հրավերի տեքստի 7-րդ էջում զետեղվել է, որ «Մասնակցի աշխատակազմում (աուդիտն իրականացնող խմբում) պետք է ընդգրկված լինի առնվազն մեկ աշխատակից, որը պետք է ունենա ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի շրջանակում աուդիտորական խմբի ղեկավարման առնվազն 7 տարվա փորձ և «Երդվյալ հաշվապահների միջազգային ասոցիացիայի (ACCA)» առնվազն 10 տարվա անդամակցությունը հավաստող փաստաթուղթ (Fellow Member Certificate)»:

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերում որակավորման վերոնշյալ չափանիշի ներառումը խոչընդոտ է հանդիսանում

մասնակցելու գնման գործընթացին, խտրական է և սահմանափակում է մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, ինչպես նաև համարժեք չէ, ուղղակիորեն չի բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն նշել է, որ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանում նշված չէ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված նախահաշվային գինը, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդածի 4-րդ կետի պահանջները:

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից հայտարարված «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը հակասում է՝

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին՝ չի ծառայում գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպմանը և չի ապահովում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը,

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերին՝ հրավերում սահմանված որակավորման չափանիշները՝

1) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին,

2) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ ու 3-րդ կետերին՝ մասնավորապես՝

1) չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար,

2) հանգեցնում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը

3) օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն հայտնել է նաև, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետի 1-

ին ենթակետի բ) մասի 2-րդ պարբերությամբ նախատեսվում է բացառություն, ըստ որի՝ շինարարական և խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում Պատվիրատուն հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշներում կարող է սահմանել աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին ներկայացվող պահանջներ, սակայն «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը վերաբերում է աուդիտորական ծառայությունների ձեռքբերմանը, որը շինարարական կամ խորհրդատվական ծառայություն չէ, քանի որ՝

- «Նմանատիպ խմբերում ներառվող գնման առարկաների ցանկը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 14.06.2013թ. N 485-Ն հրամանով աուդիտորական ծառայությունները առանձնացված է խորհրդատվական ծառայություններից,
- ՀՀ տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» հաստատելու մասին ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N 874-Ն հրամանով առանձնացված են աուդիտը և խորհրդատվական ծառայությունները:

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն նշել է, որ ընթացակարգի հրավերում առկա չափանիշն իր բնույթով ամենևին չի առնչվում աուդիտորական ծառայությունների պատշաճ կատարման հետ, քանի որ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված է, որ աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա առնվազն 5 աուդիտորի որակավորում ստացած աուդիտորներ, որը հանդիսանում է նաև աուդիտորական կազմակերպությանը տրված աուդիտորական գործունեության լիցենզիայի տրամադրման պայման՝ հետևաբար աուդիտորական գործունեություն իրականացնող ընկերությունների առջև նման աշխատանքային ռեսուրս ունենալու պահանջ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն խնդրել է վերացնել «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից կազմակերպված «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերում «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի բավարարման համար՝ «Մասնակցի աշխատակազմում ընդգրկող աշխատակցի՝ ոչ առևտրային կազմակերպությունների աուդիտի շրջանակում աուդիտորական խմբի ղեկավարման առնվազն 7 տարվա փորձ և «Երդվյալ հաշվապահների միջազգային ասոցիացիայի» առնվազն 10 տարվա անդամակցությունը հավաստող փաստաթուղթ ունենալու պահանջը:

2. <u>«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 09.12.2013թ. N 04/032-1916 գրությամբ դիմել է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 05.12.2013թ. «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը 13.12.2013թ. N 01-14/473 գրությամբ «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդատվական ծառայություն է հանդիսանում այն ծառայությունը, որի մատուցման արդյունքում ստեղծվում են ոչ նյութական՝ ֆիզիկական սուբստանցիայից զուրկ ակտիվներ (արժեքներ):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության համաձայն՝ խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվող գնման հայտը ներառում է «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Ելնելով վերոգրյալից «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը հայտնել է, որ վերը նշված ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք ծառայության արդյունքում ստեղծվում է ոչ նյութական ակտիվ, ուստի գնման հայտով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով նախատեսվել են մասնակցին ներկայացվող պահանջներ՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը:

Ինչ վերաբերում է գնումների պլանում աուդիտորական ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված նախահաշվային արժեքը նշված չլինելու հանգամանքին, «Ա. Ի.

Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը հայտնել է, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա, իսկ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի» կազմակերպման կարգի 25-րդ կետով սահմանված նորմի համաձայն՝ գնում կատարելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

3. ԳԲԽ-47/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից 05.12.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ հայտարարելու որոշումը:

4. ԳԲԽ-47/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-47/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 05.12.2013թ. ներկայացված բողոքը, «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 13.12.2013թ. N 01-14/473 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն:

1. «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ

«Մասնակցի աշխատակազմում» պետք է ընդգրկված լինի առնվազն մեկ աշխատակից, որը պետք է ունենա ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի շրջանակում աուդիտորական խմբի ղեկավարման առնվազն 7 տարվա փորձ և «Երդվյալ հաշվապահների միջազգային ասոցիացիայի (ACCA)» առնվազն 10 տարվա անդամակցությունը հավաստող փաստաթուղթ (Fellow Member Certificate)»:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը՝ խնդրելով վերացնել Ընթացակարգի հրավերով սահմանված «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի բավարարման համար՝ «Մասնակցի աշխատակազմում» ընդգրկվող աշխատակցի՝ ոչ առևտրային կազմակերպությունների աուդիտի շրջանակում աուդիտորական խմբի ղեկավարման առնվազն 7 տարվա փորձ և «Երդվյալ հաշվապահների միջազգային ասոցիացիայի» առնվազն 10 տարվա անդամակցությունը հավաստող փաստաթուղթ ունենալու պահանջը:

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը 13.12.2013թ. Կենտրոնին ներկայացրած N 01-14/473 գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդատվական ծառայություն է հանդիսանում այն ծառայությունը, որի մատուցման արդյունքում ստեղծվում են ոչ նյութական՝ ֆիզիկական սուբստանցիայից զուրկ ակտիվներ (արժեքներ), իսկ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության համաձայն խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվող գնման հայտը ներառում է «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի շրջանակում կնքվելիք ծառայության արդյունքում ստեղծվում է ոչ նյութական ակտիվ, ուստի գնման հայտով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով նախատեսվել են մասնակցին ներկայացվող

պահանջներ՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Կենտրոնում ս.թ. դեկտեմբերի 18-ին ժամը 16:30-ին ԳԲԽ 47/13 բողոքի շրջանակներում կազմակերպված լսումների ընթացքում «Էյ Էն Աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Կենտրոնին 05.12.2013թ. բողոքով ներկայացրած փաստարկները՝ հայտնելով, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգով գնման առարկա են հանդիսանում ոչ թե խորհրդատվական, այլ աուդիտորական ծառայությունների ձեռքբերումը, որոնք էապես տարբերվում են միմյանցից, իսկ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի 2.3 կետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի բավարարման համար նախատեսված պայմանները հակասում են ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 84-րդ կետի պահանջներին, քանի որ խտրական են, սահմանափակում են մրցակցությունը և համարժեք չեն, ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ առաջնորդվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերությամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի շրջանակներում կնքվելիք ծառայության արդյունքում ստեղծվում է ոչ նյութական ակտիվ, գնման հայտով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով նախատեսվել են մասնակցին ներկայացվող պահանջներ՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդատվական ծառայություններ են հանդիսանում այն ծառայությունները, որոնց մատուցման արդյունքում ստեղծվում են ոչ նյութական՝ ֆիզիկական սուբստանցիայից զուրկ ակտիվներ (արժեքներ):

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝

• 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

• 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով,

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին,

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 42-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է բաց կամ սահմանափակ ընթացակարգով՝ նույն օրենքով նախատեսված կարգով, եթե նույն օրենքով այլ բան նախատեսված չէ,

• խորհրդատվական ծառայության բաց կամ սահմանափակ ընթացակարգով գնման դեպքում խորհրդատուների ցուցակ կազմելու նպատակով նույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման 1.1 կետով հաստատված N 3 հավելվածի՝ գնումների միասնական անվանացանկի՝

• 1-ին կետի համաձայն՝ գնումների միասնական անվանացանկը կազմված է թվային դասակարգիչներից,

• 2-րդ կետի համաձայն՝ հիմնական անվանացանկն ունի ծառի կառուցվածք և կազմված է մինչև ութ նիշ ունեցող ծածկագրերից, որոնք կապված են պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը նկարագրող բառերի հետ: Թվային ծածկագիրը բաղկացած է 8 նիշից և բաժանված է հետևյալ կերպ՝

1) առաջին երկու նիշերը ցույց են տալիս բաժինը (XX000000).

2) երրորդ նիշը ցույց է տալիս խումբը (XXX00000).

3) չորրորդ նիշը՝ դասը (XXXX0000).

4) հինգերորդ նիշը՝ դասակարգիչը (XXXXX000):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նմանատիպ խմբերում ներառվող գնման առարկաների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 84-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին,

2. Եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ ընտրված մասնակիցը՝ մինչև պայմանագրի կնքումը, ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը՝ ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը, գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները:

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար ընտրված մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3. մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ ֆինանսների նախարարի 10.10.2013թ. N 896-Ն հրամանով հաստատված գնումների միասնական անվանացանկի թվային ծածկագրի յուրաքանչյուր բաժնի խմբերի,

դասերի և դասակարգիչների հավելված N 5-ով աուդիտորական ծառայությունները նախատեսված են N 79212000, իսկ ֆինանսական խորհրդատվության ծառայությունները N 66171000 թվային ծածկագրերով:

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի 2.3 կետով սահմանված «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի բավարարման համար՝ «Մասնակցի աշխատակազմում ընդգրկվող աշխատակցի՝ ոչ առևտրային կազմակերպությունների աուդիտի շրջանակում աուդիտորական խմբի ղեկավարման առնվազն 7 տարվա փորձ և «Երդվյալ հաշվապահների միջազգային ասոցիացիայի» առնվազն 10 տարվա անդամակցությունը հավաստող փաստաթուղթ ունենալու պահանջի վերաբերյալ Պատվիրատուն չի ներկայացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումները բացառող որևէ հիմնավորում:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 84-րդ կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի 13.12.2013թ. N 01-14/473 գրությամբ ներկայացրած այն փաստին, համաձայն որի «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի շրջանակներում կնքվելիք ծառայության արդյունքում ստեղծվում է ոչ նյութական ակտիվ, ուստի գնման հայտով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով նախատեսվել են մասնակցին ներկայացվող պահանջներ՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, ապա Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ աուդիտորական և խորհրդատվական ծառայությունները ՀՀ ֆինանսների նախարարի 10.10.2013թ. N 896-Ն հրամանով հաստատված N 5 հավելվածով նախատեսված գնումների միասնական անվանացանկում նախատեսված են թվային տարբեր ծածկագրերով, այսինքն՝ տարանջատված են, ընդ որում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն Օրենքի 42-րդ հոդվածի համաձայն իրականացվում է բաց կամ սահմանափակ ընթացակարգով, մինչդեռ տվյալ դեպքում իրականացվել է պարզեցված ընթացակարգ, որի դեպքում Կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի բ. պարբերությամբ նախատեսված պահանջը չէր կարող կիրառվել:

2. «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանում նշված չէ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված նախահաշվային գինը, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդածի 4-րդ կետի պահանջները:

Պատվիրատուն 13.12.2013թ. Կենտրոնին ներկայացրած N 01-14/473 գրությամբ հայտնել է, որ «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա, իսկ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 25-րդ կետով սահմանված նորմի համաձայն՝ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝

- 4-րդ մասի համաձայն՝ գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի: Դրանք հրապարակվում են տեղեկագրում, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի,
- 7-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, նույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել: Նույն մասը կարող է կիրառվել եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 25-րդ կետի համաձայն՝ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման

ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից հրապարակված գնումների պլանում ասուդիտորական ծառայությունների ձեռքբերման համար նախահաշվային գին չսահմանելը իրականացվել է Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով և Կարգի 25-րդ կետով սահմանված պահանջների պահպանմամբ:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից 05.12.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԱԳԼ-ՊԸԾՁԲ-13/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ հայտարարելու որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամներ՝ Արթուր Ավետիսյան

Աիդա Կարապետյան